

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

Նոր ճաշակ դպրութեան, կամ
Ղարտասանութիւն առ ձեռն:

Նարեկ միջոդիւր:

Յանկացողք կարող են գնել սոյն գրք-
եանքը, ինչպէս Մթուէս, նոյնպէս և իւր
գործակալներէն զանազան բաղաբայ մէջ:

ՄԱՄԼՈՅ ՅԱՆՁՆՈՒԱԾ

Քերականութիւն Հայ — Գաղ.
Պատմութիւն Սատթէոսի Ուռ-
հայեցւոյ:

Լտենի Ժամագիրք:

Բնդհանրական Ներսիսի Շնորհա-
ւոյ:

Յիշեալ մատենից տպագրութիւն
նը արդէն աւարտուելու վրայ է, ո-
րոց ընտիր և խնամով տպագրութեան
մասին յետոյ պիտի խօսինք:

ՔՈՒՆԸ ՆՍԼԻՒՔ

(Հարուհակութիւն տես թիւ 1):

8. Քանի մի զինուորներ պատերազ-
մի ատեն գիւղի մի մէջ կը բնակէին,
ինդ՝ գիւղացիի մը պատահելով զայն
գանակոծելէն վերջը անոր ստակն ու
վերարկուն առին: Գիւղացին ալ գըն-
դապետին մեկուն գանգաւորու գնաց,
որնոր ըսաւ անոր, բարեկամ, երբ զին-
ւորներս զքեզ կողոպտեցին, այս զգես-
տըդ վրայդ էր: Այս տէր իմ, պատաս-
խանեց, գնա ուրեմն ու ապահով ե-
ղիր, ըսաւ գնդապետը, որ իմ զինուոր-
ներս չէին, ապա թէ ոչ մինչուէլ շա-
պիկդ ալ կ'առնէին:

9. Նմիտ երիտասարդ մը նամակ գրել
կուղէր իւր մէկ բարեկամին, և ինչպէս
ընելէքը չգիտէր, նամականի մի գնեց,
և իւր բաղձանքին համեմատ նամակ
մի գրաւ և ճշգիւ օրինակեց զայն, և
խրկելու տեղը խրկեց, յիշեալ բարե-

կամը որ մի եւ նոյն գիրքը ունէր, ա-
նոր մէջ գտաւ այս նամակը, և անոր
սա խօսքերով պատասխանեց. « պարոն,
նամակդ ստացայ, թուղթը դարձուր
և անոր պատասխանը կը գտնաս »:

10. Յովսէփ Կայսրը, Գաղղիոյ քա-
ղաքներէն մեկին իւր մարդիկներէն յա-
ռաջ հասած ըլլալով, պանդոկապետը որ
զուարթ բնութիւն մի ունէր, հարցուց ա-
նոր, կայսեր քով մարդիկներէն ես պա-
տասխանեց թէ ոչ: Քիչ ժամանակէ
մը յըջ իւր սենեակը մտաւ, մօրուքը
ածիլելու զբաղած ատենը հարցուց
անոր, կայսեր քով պաշտօն մի ունի՞ս.
այո՛, պատասխանեց ինքնակալը, երբե-
մըն կը ստիրեմ:

11. Գիւղացի մը իւր ցաւին համար
բժշկին խրատ հարցնելու կ'երթայ.
բժիշկը հիւանդութիւնը քննելէն վեր-
ջը, գրոտեղանին առջեւ նստաւ, և
անոր հիւանդութեան վերաբերեալ
ստմանակ միջբեց, և անոր տալով ը-
սաւ՝ վաղը առաւօտ ասիկայ կեր և
շուտ մի առողջութիւն կը գտնաս:
Գիւղացին կարծելով որ նոյն իսկ գե-
ղը՝ թուղթն էր, մեծ յուսով ետ դար-
ձաւ միւս օրը առաւօտ կանուխ կու-
տուաւ զայն և կատարելապէս առող-
ջացաւ:

12. Մշնուական աղքատ մի պարտա-
տէրներուն իւր պարտքը չը կրնալով
հատուցանել, առտու մի կանուխ ել-
նելով կրօնէր. անոց ամեն ալ սատանան
սանի, որ այսօր ինձմէ դրամ խնդրե-
լու պիտի գան: Այս խօսքը լրմնու-
նելուն պէս սկսան դուռը զարնել, բա-
ցաւ դուռը և տեսաւ որ իւր չորս
պարտատէրները ներս մտան, որոնք առ-
նելքնին պահանջել սկսան ըսելով՝ թէ
տակաւին մոռնալու եմ զմեզ, կ'երդ-
նում, ըսաւ անոնց աշնուականը, որ
քիչ մի յառաջ ձեր վերայ կը մոտածէի:

(Պիտի շարունակութիւն)